ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

0087, ՀՀ, ք.Երևան, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«YEREVAN TPC» CJSC

0087, RA, Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ 90-25
16.12.2025.

«ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն

Անի Գալստյանին

Հասցե՝ ՀՀ ք. Երևան,

Դավիթաշեն 4-րդ թաղ, 34շ, բն 17

Էլեկտրոնային հասցեն՝

g-agroup@mail.ru

Հարգելի Գալստյան

Սույն գրությամբ հայտնում եմ, որ «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջև 2025թ-ի նոյեմբերի 26-ին, երկկողմանի ստորագրված թիվ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/59-1 պայմանագիրը՝ օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայությունների ձեռքբերման մասին, տեղադրվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Համաձայն վերոգրյալ պայմանագրի 1-ին և 1.1-ի հավելվածների Կատարողը՝ «ՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, պարտավորվում է մատուցել օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայություններ:

Օդորակիչների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայություններ մատուցելու համար, մեր ընկերության պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների կողմից ուղարկվել է այն հինգ անուն օդորակիչների անվանումները նշելով այն թերությունները, որոնք անհրաժեշտ են շտապ վերանորոգել: Վերջին շաբաթների ընթացքում, մի քանի անգամ հեռախոսով հայտ է ներկայացվել Ձեր մասնագետի այցելության մասին:

Սույն թվականի դեկտեմբերի 9-ին և դեկտեմբերի 10-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է գրություններ, Ձեր կողմից ըստ երկկողմանի կնքված պայմանագրի պարտավորությունների շտապ կատարելու մասին:

Սակայն մինչև օրս Ձեր ընկերության մասնագետների մի քանի անգամ կատարված այցելություններից հետո օդորկիչների վերանորոգումը չի սկսվել, որը նշանակում է որ Ձեր ընկերությունը հրաժարվում է կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) կետի և թիվ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/59-1 պայմանագրի 2.1.3 և 7.9 կետերի Ձեր ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված և գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները:

Պատասխանատու ստորաբաժանումը(ՊՍ) 2025 թ-ի դեկտեմբերի 16-ի գրությամբ, առաջարկում է թիվ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/59-1 պայմանագիրը միակողմանի լուծել:

Սույն գրությամբ հայտնում ենք, որ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է թիվ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/59-1 պայմանագիրը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի սկում է Ձեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմնին է ներկայացնում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/59» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարել Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ 2473600002170010 հաշվեհամարին և այդ մասին գրավոր տեղեկացնել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Կից ներկայցվում է՝

1. Պատասխանատու ստորաբաժանման 09.12.2025թ-ի գրությունը - 1 էջ:
2. Պատասխանատու ստորաբաժանման 16.12.2025թ-ի գրությունը – 2 էջ
2. 2025 թ-ի դեկտեմբերի 9-ի էլեկտրոնային գրությունը - 1 էջ:
3. 2025 թ-ի դեկտեմբերի 10-ի էլեկտրոնային գրությունը - 2-էջ:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Կատարող՝ Ա. Պետրոսյան
հեռ. 011 47-26-11